ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ

ԳԻՏԵԼԻՔԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի աշակերտներ, ուսանողներ, կրթական ոլորտի հարգելի ներկայացուցիչներ, շնորհավորում եմ բոլորիդ Գիտելիքի օրվա կապակցությամբ: Գիտելիքն այն բանալին է, որով ողջ կյանքի ընթացքում կարողանալու եք բացել ձեզ համար ցանկալի դռները: Միայն դրա շնորհիվ եք կարողանալու ճանաչել աշխարհն ամբողջությամբ:

Սիրելի աշակերտներ, հասարակական կյանքի մեծագույն չարիքը տգիտությունն է: Լիահույս եմ, որ ձեր շարքերում գտնվող և ոչ ոք հետագա բեռ չի դառնալու մարդկության ուսերին: Վերցրեք գիտելիքի անսահման օվկիանոսից այնքան, որքան կարող եք, և դարձեք պիտանի և որակյալ մարդիկ ինքներդ ձեր և ձեր հայրենիքի համար:

Սիրելի ուսուցիչներ, արագ փոփոխվող աշխարհում ամենամեծ մարտահրավերները ձեզ են ուղղված, քանզի ձեր ուսերին է դրված մարդ կրթելու և դաստիարակելու մեծագույն պարտականությունը:

Զինվեք համբերությամբ և ձեր ընթերցած դասերի հետ մեկտեղ ձեր աշակերտներին փոխանցեք մեր ազգային լավագույն որակներն ու մարդկային բարձր արժանիքները:

Մեկ անգամ ևս շնորհավորում եմ բոլորիդ: Թող գիտելիքի ճանապարհը՝ դյուրին, արդյունքը՝ արժանավայել լինի բոլորիդ համար:

Հարգանքներով՝ Սուրեն Կոստանդյան